

Թիւ 25682  
Մարտ 15, 1978

Արժանաշնորհ  
Տ. Առնակ ԲՅՆՅ. Քասպարեան  
Հովիւ Ս. Թովմաս Եկեղեցւոյ  
Նախագահ ծխական Խորհուրդի  
Թենեֆլայ.

Սիրելի Տէր Առնակ,

Այսօր ստացանք Եկեղեցւոյ ծխական ժողովի լրացուցիչ տեղեկագիրները: Ժամանակին ստացած ենք Փետրուար 15, 1978 թուակիր ձեր նամակը, որով կը հաղորդէք թէ ձեր նախագահութեամբ Փետրուար 12ին գումարուած համայնքի ծխական ժողովին մէջ կատարուած է ծխական Խորհուրդի հինգ անդամոց ընտրութիւնը, եւ ներկայացնելով քուէարկութեան արդիւնքը՝ կը խնդրէք ընտրուած անձերու վաւերացման պաշտօնագիրը:

Նկատի ունենալով որ ձեր ծխական ժողովը տեղի ունեցած է Թեմական Կանոնադրութեան տրամադրութեան համաձայն, այսու կէ վաւերացնենք ծխական Խորհուրդի նորընտիր անդամները, ըստ ստորեւ տրուած ցանկին:

Հանեցէք փութով Առաջնորդարան ղրկել ծխական Խորհուրդի նորընտիր Գիւանի անդամոց անունները, հասցէները եւ հեռաձայնի թիւերը:

Օրհնելով ծխական Խորհուրդի նոր կազմը, կը մաղթենք ձեզի եւ ձեր պաշտօնակիցներուն յաջող եւ արդիւնաւոր գործունէութեան տարի մը, ի պայծառութիւն Ս. Եկեղեցւոյ եւ ի հոգեւոր շինութիւն համայնքի մեր սիրեցեալ ժողովուրդին:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵԳԻՍԿՈՂՈՍ  
Առաջնորդ

Վիքթոր Վարդան Արզուման  
Սամուէլ Տէմիրճեան  
Զարլգ Տուտուրճեան  
Ալպրթ Վիքթորիա  
Վահան Պարսամեան